

Հայաստանը պատրաստ է լիարժեք դիմակայել թրաֆիքինգին

<< Ա՛խ, ի՛նչ հաճելի երկնագույն էր երկինքն իմ հայրենի գյուղի վրա , ի՛նչ անուշ էր բուրում վարդը մեր բակում : Չկային կապուտաչ ծով , հանգստացողների ծիծաղ ու անհոգ աչքեր , բայց քաղցր էր կյանքը : Փող չկար , որ խանութից իմ սիրած շորը գնեի , բայց ուրախ էր սիրտս... Մորս դիտողությունն էլ այսօր քաղցրահունչ գովեստ է թվում : Երանի՛ լինեի մեր գյուղի հանդում , տեսնեի թիթեռների պարը ծաղիկների հետ , թեկուզ կիսաքաղց , թեկուզ հոգնած , բայց քնեի իմ անկողնում : Թող մայրս առավոտյան շուտ արթնացներ ու ջրի ուղարկեր , թող հագնելու գեղեցիկ շոր չունենայի , բայց անհոգ ծիծաղեի : Դեռ չլուսացած լվանում եմ բակը , աստիճանները , խնամում եմ ծաղիկները , փոխում եմ բաղնիքի սրբիչները... մինչև կարթնանան հովեկները : Հետո արագ պիտի կատարեմ նրանց բոլոր պահանջները , միշտ ժպիտ պիտի լինի իմ դեմքին և դժգոհություն ծվեն էլ չպիտի երևա իմ աչքերում , նույնիսկ եթե ծաղրեն կամ վիրավորեն >> :

Մրտի ցավով որերորդ անագամ կարդում եմ ընկերուհուս նամակը : Անգուսպ արցունքները ողողում են դեմքս , երբ մտերիմներիցս մեկը առաջարկում է կինո կամ ցուցահանդես գնալ , կասկածը սողոսկում է սիրտս . ի՞նչ կա նախապատրաստված : Դժվար է չպարել առանց հավատի , առանց վստահության : Ես այլևս չեմ հավատում որևէ մեկի , ամենուր ցավից կծկված սիրտ ու արցունքոտ աչքեր , խեղված կյանք եմ տեսնում : Ես չեմ դառնա , չե՛ , չեմ դառնա թրաֆիքինգի գոհ : Մակայն ցածր կենսամակարդակ ունեցող իմ հայրենիքում , հարկերի ու վարկերի տակ կքած իմ ժողովրդի շատ որդիներ ու դուստրեր իրենց ընտանիքներին օգնելու համար աշխատանք միշտ էլ կփնտրեն օտար ափերում : Մինչև բարեկեցիկ նորմալ կյանք չապահովվի իմ երկրում , մենք երբեք էլ չենք կարող լիարժեք դիմակայել թրաֆիքինգին . միշտ էլ գոհեր կունենանք :

Լեա

*Կերտիսի Տրեն Կարպի 11-րդ դաս*